ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՏՆՎԱԾ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐ

(Մ. թ. ա. V դ. մ. թ. I դ.)

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի մ. թ. ա. VI—I դդ. նյութական մշակույթը մեզ քիչ է հայտնի, ուստի Գառնիում և Գեղադիրում վերջին տարիներին հայտնաբերված դամբարանային նյութերը խոշոր նշանակություն են ստանում Հայաստանի այդ շրջանի նյութական մշակույթի ուսումնասիրության որոշ հարցերի լուսաբանման համար։

Ներկա հոդվածի առարկան կազմում են դամբարաններում հայտնաբերված գունազարդ խեցեղենը, ինչպես նաև պատահաբար հայտնաբերված և Պետական պատմական թանգարանում պահվող գունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ։ Վերջիններս իրենց մշակումով, զարդերով ու ձևերով կապվում են դամբարանային նյութերի հետ և իրենց տեղն ու բացատրությունը գտնում նրանց միջոցով, միաժամանակ դրանք նկատելիորեն լրացնում են դամբարանային գունազարդ խեցեղենի պատկերը։

Խեցեղեն իրերի մեջ ամենավաղ և հետաքրքիր օրինակներից մեկը դա Գեղադիրում հայտնաբերված տափաշիշն է (տախտ. I,), որը գտնվել է Երևան-Գառնի խճուղու շինարարության ժամանակ։ Տափաշիշը, որի բարձր. 12 սմ է, լայնքը՝ 12 սմ, բերանի բացվածքը՝ 3 սմ, ունի նեղ, կարճ վիզ, բոլորակ դուրս թեքված շուրթ։ Փոքր ինչ սեղմված տափակ իրանի ուսերին կաս երկու ուղղահայաց, փոքրիկ կանթեր։ Հատակը բոլորակ է։ Վզի և իրանի միացման տեղում կարմիր, նեղ գոտի է անցնում, որից ներքև մուգ դարչնագույն ներկով տարված են երկու շարք ծաղկաշղթայաձև զարդեր՝ երկու զիգզագաձև և երկու ուղիղ գծեր։ Նշված զարդերի միջև կարմիր ներկով տարված են համեմատաբար ավելի լայն հորիզոնական գոտիներ։ Ամբողջ նկարազարդումը կատարված է բաց դեղնավուն ֆոնի վրա և գրավում է անոթի վերին մասը։ Տափաշիշը պատրաստված է բաց դեղնավուն լավ տրորված մանրահատիկ կավից, որի մեջ նշմարվում են սև ավազահատիկներ։ Մակերևույթը լավ հղկված ու փայլեցված է։ Փոքրիկ նեղ անցքերով կանթերը (բարձր.՝ 2 սմ) և կլոր հատակը ցույց են տալիս, որ այն կախելու համար է եղել, հավանաբար ռազմիկները երթի ժամանակ կրել են իրենց վրա։

Չափերով Գեղադիրի տափաշշին բավականաչափ մոտ է Նախիջևանի մոտ՝ Քյուլ-Թափայում հայտնաբերված տափաշիշը (պահվում է Վրաստանի պետական թանգարանում), որի մի կողմը քիչ տափակ է և անզարդ, իսկ մյուս ուռուցիկ կողմում բաց ֆոնի վրա սև և կարմիր ներկով պատկերված է վեց թևանի աստղ, թևերի մեջ՝ թռչնակերպ նախշեր[1]։ Դժբախտաբար սրա ճիշտ ժամանակը որոշված չէ։ Դեղնավուն, բաց կարմիր, կաթնավուն ֆոնի վրա արված համակենտրոն շրջաններով զարդարված տափաշշեր-ջրամաններ հայտնի են Արմավիրի և Գառնիի հելլենիստական շերտերից, Դվինից։ Բայց սրանք ավելի խոշոր ու միագույն զարդերով են։ Ադրբեջանում հայտնաբերված տափաշշերի գերակշռող մասի մի կողմը տափակ է և անզարդ։ Նույն ձևի են Վրաստանում[3] և Միջին Ասիայում[4] հայտնաբերվածները։ Նրանց ուռուցիկ կողմերին ակոսավոր զարդեր են արված, կենտրոնում թմբիկ, քիչ են հանդիպում գույներով արված նախշեր։ Տափաշշեր հայտնի են նաև Փոքր Ասիայից՝ մեկ կանթանի, անզարդ կամ համակենտրոն շրջաննե-

---

[1] Б. А. Куфтин, Урартский „колумбарий" у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, Тбилиси, 1944, էջ 96, տախտ. XVIII,[2]

[2] С. М. Казиев, Археологические раскопки в Мингечауре. Альбом кувшинных погребений, Баку, 1960, էջ [illegible], տախտ. XV—XVII; Н. И. Рзаев, Художественная керамика Кавказской Албании, Баку, 1964, էջ 37 և հտ., նկ 25։

[3] Н. И. Рзаев, նշվ. աշխ., էջ 38; Г. Ниорадзе, Раскопки в Алазанской долине, Тбилиси, 1940, նկ. 39։

[4] М. Г. Воробьева, Керамика Хорезма античного периода, „Керамика Хорезма", Москва, 1959, նկ. 12—16։

րով զարդարված, թվագրվում են երկրորդ հազարամյակի կեսերով[5]։ Պերսեպոլսում հայտնաբերված տափաշշերը ունեն սիմետրիկ դասավորությամբ երկու կանթ, բայց պատահում են նաև անկանթ ու առանց զարդերի։ Տափակ կողերով և համակենտրոն շրջաններով զարդարված երկկանթ տափաշշերից մեկը ձևով շատ նման է մերին[6]։ Ձևով ու չափերով Գեղադիրի տափաշշին նման, բայց առանց զարդերի, ինչպես նաև չափերով ավելի մեծ տափաշշեր գտնվել են Դուրա Եվրոպոսի հելլենիստական շրջանի դամբարաններում[7]։ Այդպիսիք, ներկով արված համակենտրոն շրջաններով, հայտնի են Թել Հալաֆի հելլենիստական շերտերից[8], զանազան ձևերով ու զարդերով՝ Տիգրիսի ափի Սելևկիայից[9], Նեմրութի հելլենիստական թաղամասից[10], Աշուրից[11], Տաքսիլայից[12]։ Սրանք Հայաստանի օրինակներին նման են, բայց ավելի ուռուցիկ են, զարդարված միագույն համակենտրոն շրջաններով։ Համակենտրոն շրջաններով մեծ տափաշշեր գտնվել են Ղրիմում՝ Եվպատորիայի մոտ, հելլենիստական շրջանի ֆակտորիայի պեղումներից, Խերսոնեսում[13], Օլվիայում[14]։

Գեղադիրում հայտնաբերված տափաշիշը վերը բերվածների հետ համեմատելուց հետո կարելի է ասել, որ դրանցից և ոչ մեկը չունի այն երկգույն, բնորոշ տիպի զարդերը, որոնք կան Գեղադիրի տափաշշի վրա։ Այդպիսի նախշերով հարդարված անոթներ զգալի քանակությամբ հանդիպում են Հայաստանում։ Գեղադիրի տափաշշին իր զարդերով որոշ նմանություն ունի Կարմիր բլուրի քաղաքային թաղամասում բացված վաղ հայկական գերեզմաններից մեկում գտնված երկու գնդաձև մարմիններով իրար կպած անոթը[15]։

Տափաշշի նախշերին նման և այլ տիպի նախշերով է զարդարված Պետական պատմական թանգարանում պահվող մի փոքրիկ սափոր (բարձր.՝ 12 սմ, հատ. լայն.՝ 5 սմ)։ Սափորի ամբողջ մակերեսը ծածկված է բարդ երկրաչափական զարդերով, որոնք պատկերված են բաց դեղնավուն անգոբով պատած ֆոնի վրա։ Բացի ծաղկաշղթայաձև զարդերից, այստեղ պատկերված է նաև շղթայաձև զարդ։ Սափորի ներքին հորիզոնական կարմիր ժապավենից սուր երկար ծայրով դեպի հատակն են իջնում 12 եռանկյունիներ, որոնք իրենց հերթին եզերված են մուգ դարչնագույն հաստ գծերով (տախտ. I$_2$)։

Զիգզագաձև զարդեր կան նաև Արևշատ գյուղից բերված և Պետական պատմական թանգարանում պահվող կարմիր և մուգ դարչնագույն ներկերով զարդարված երկու բեկորների (ՊՊԹ, 1394, 1395) և Նոր Արմավիրում գտնված թեյնիկանման ծորակով լայնաբերան մեծ անոթի (ՊՊԹ, 1331) վերին կեսի վրա։ Գոտիների մեջ արված ալիքաձև, զիգզագաձև և ծաղկեշղթայաձև նախշերով զարդարված բեկորներ շատ են գտնվել Արմավիրի, Գառնիի ու Դվինի հելլենիստական և վաղ հայկական շրջանի շերտերից։

Վերը բերված զուգահեռները, ինչպես նաև Կարմիր բլուրի, Արմավիրի ու Գառնիի նույն զարդերով խեցեղենը, թույլ են տալիս Գեղադիրից հայտնաբերված բազմերանգ տափաշիշը և սափորը թվագրելու մ. թ. ա. V—III դդ.։

[5] T a h s ı n O z g u ç, Granbungene von 1950 in Kültepe. Belleten, XVII, 65, Ankara, 1953, էջ 116, նկ. 19, 20։

[6] S c h m i d t E r i c h F., Persepolis, II, Chicago, 1957, տախտ. 71$_8$, 72$_{12,13}$, 73$_1$։

[7] N. P. T o l l, The Necropolis. The Excavations at Dura-Europos. Preliminary Report of the ninth season of work 1935—1936. P. II, New Haven. London, 1946, գծագր. 55, տախտ. LIX, LX; T o l l N. P., Final Report IV, P. I, New Haven, London, 1943. էջ 53, նկ. 25։

[8] O p e n h e i m M a x F r e i h e r r. Tell Halof. Vierter Band. Berlin, 1962, տախտ. 72$_{5}$։

[9] N. C. D e b e v o i s e, Parthian Pottery from Selevcia on the Tigris, Ann Arbor, 1934, նկ. 298—304։

[10] D a v i d a n d J o a n O a t e s, Nimrud, 1957; The Hellenistic settlement, Iraq, vol. XX, p. 2, 1958, տախտ. XXX$_{6,7,9}$։

[11] A n d r a e W a l t e r und L e n z e n H e i n z, Die Partherstadt Assur. Leipzig, 1933, տախտ. 47a, e.

[12] J. M a r s h a l l, Taxila. Cambridge, 1951, տախտ. 122$_{44,45}$։

[13] Г. Д. Б е л о в, Эллинистический дом в Херсонесе, „Труды Гос. Эрмитажа", VI, Ленинград, 1963, էջ 153, նկ. 20։

[14] „Известия Государственной академии истории материальной культуры", X, вып. 5, նկ. 20։

[15] А. А. М а р т и р о с я н, Город Тейшебаини, Ереван, 1961, էջ 42, նկ. 66։

Պետական պատմական թանգարանում պահվում է Ծովինարից բերված գնդաձև իրանով, լայն կարճ վզով և դեպի դուրս լայնացող, երեքնուկի նման պսակով մի սափոր, որի լայն հատակը թեթևակիորեն ներճկված է։ Կանթի մի ծայրը միացած է վզի կենտրոնին, մյուսը՝ փորին (բարձր.՝ 13 սմ, պսակի տր.՝ 6,5 սմ, հատ. լայն՝ 8,5 սմ)։ Իրանի վերին կեսը ծածկված է մուգ կարմիր ներկի լայն շերտով։ Իսկ քիչ ակոսավոր կանթը զարդարված է նույն գույնի ոչ լայն հորիզոնական ժապավեններով։ Երեքնուկի նման պսակի տակ երկու տեղում ուղղաձիգ շրջաններ կան։ Մակերեսը լավ փայլեցրած է (տախտ. I_3)։

Երեքնուկի նման պսակով անոթներ՝ օյնոխոյաներ, հայտնի են տարբեր երկրներից։ Դա սմենատարածված և ամենից երկար պահպանված ձևերից մեկն է եղել։ Հայաստանի տերիտորիայում այն գալիս է դեռևս ուրարտական շրջանից և հարատևում է մինչև ուշ միջնադար։ Այսպիսով, վերը նկարագրած օյնոխոյաների նախատիպը պետք է որոնել ուրարտական գինու սափորների[16] մեջ։

Օյնոխոյաները շատ տարածված են եղել նաև Վրաստանում[17] և Ադրբեջանում[18]։ Ծովինարի օյնոխոյան իր կատարյալ մշակմամբ, պսակի և կանթի ձևով, զարդարանքով, որպիսին շատ է հանդիպում Արմավիրի հելլենիստական գունազարդ խեցեղենի մեջ, կարող է թվագրվել մ. թ. ա. III—I դդ.։

Գառնի ամրոցի մուտքի մոտ կարասային թաղումից գտնվել է գունազարդ մի պուլիկ (տախտ. II$_1$)։ Պատրաստված է մանրահատիկ հավից, ունի ցածր, դեպի վեր լայնացող վիզ, որը վերջանում է դուրս թեքվող գրեթե ուղիղ կտրված պսակով։ Հատակը հարթ է ու լայն։ Իրանի կենտրոնից անցնում է կարմիր ներկով արված հորիզոնական մի գոտի, որը պսակի տակից անցնող կարմիր գոտուց դեպի հատակն իջնող ժապավեններով բաժանվում է մի շարք անհավասար մասերի։ Նկարը արված է պուլիկի՝ բաց գույնի, փայլեցրած մակերեսին։ Պուլիկն իր ձևով մոտենում է Ջրառատի և Գառնիի պուլիկներին։ Այն պատկանելով ավելի ուշ շրջանի (II—I դդ.), ժամանակի ընթացքում որոշ փոփոխությունների է ենթարկվել։

Առանձին խումբ են կազմում փոքրիկ թասերը, որոնցից երկուսը հայտնաբերվել են Գառնիում։ Դրանցից մեկը (տախտ. II$_2$) պատրաստված է բաց աղյուսագույն մանրահատիկ հավից (բարձր.՝ 2,5 սմ, հատ. լայն.՝ 5 սմ, պսակի տր.՝ 7,5 սմ)։ Լինի ուղիղ կտրված շուրթ (0,5 սմ), վիզը դեպի ներքև լայնանալով անկյուն է կազմում և նեղանալով միանում է հարթ հատակին։ Իսկը ներկված է կարմիր ներկով։ Ներսում պսակի տակից անցնող կարմիր լայն շրջան պարփակում է բաց դեղնավուն անգորի ֆոնի վրա կարմիր ներկով պատկերված խաչը։ Դրսից, պսակից դեպի լայն մասն են իջնում ուղղահայաց կարմիր ժապավեններ։ Թասի մակերեսը լավ փայլեցրած է։ Ակսպիսի զարդերով տարբեր մեծության բազմաթիվ թասեր ու պնակներ են գտնվել Արմավիրում (ՊՊԹ 2287/9, 2256/49, 2287/43) և Գառնիում։

Թասը, Ալեքսանդր Մակեդոնացու դրամի օգնությամբ (որ գտնվել է նույն դամբարանում), թվագրվում է մ. թ. ա. IV դ. վերջով —III դ. սկզբով։

Նույն պատկերն ունի Պետական պատմական թանգարանում պահվող մի փոքրիկ թաս (ՊՊԹ 1393), որի պատկերը, սակայն, մուգ դարչնագույն ներկով արված զարդերով ավելի է հարստացված։ Այն ներկված է և՛ դրսից, և՛ ներսից (բարձր.՝ 3 սմ, տրամ.՝ 9,5 սմ)։ Կարմիր խաչի սրի մոտով անցնում է մուգ դարչնագույնով արված եղևնաձև նախշ, որի մի կողմում տերևներ են նկարված, իսկ թևերի միջև, կենտրոնում կարմիր ներկով մեկական խոշոր կետ է դրված։ Այս բազմերանգ թասը մեր կարծիքով ժամանակակից է նախորդին, այսինքն պատկանում է IV—III դդ. (տախտ. II$_1$)։

Գառնիից գտնված մյուս թասը ավելի խոր է և քիչ ուրիշ ձև ունի։ Կիսագնդաձև իրանը չեշտակի ոլորումով միանում է աստիճանաբար լայնացող դեպի դուրս թեքված պսակով վերջացող

[16] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 181, Б. Б. Пиотровский, Кармир-блур III, Ереван, 1955, տախտ. VII։

[17] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, տախտ. XV; Б. А. Куфтин, Материалы к археологии Колхиды, II, Тбилиси, 1950, էջ 66 և հտ. տախտ. 19, 20$_3$; О. Лордкипанидзе, Ремесленное производство и торговля в Мцхета в I—III вв. н. э., „Труды Тбилисского государственного университета", т. 65, 1957, էջ 118; Г. Ниорадзе, Նշվ. աշխ., տախտ. XIV j, k.

[18] О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура, Баку, 1956, տախտ. I$_4$, VII$_3$, XII$_8$, XIV$_{11}$, XV$_{1,2,8}$, XVI$_2$, XXXI$_4$; Н. И. Рзаев, նշվ. աշխ., նկ. 55, 57, 58; Пассек Т., Джаджарханский могильник. ВДИ, 1946, № 2, նկ. 16։

բարձր վզին։ Հատակը ներքկված է, ներսից այն նման է կիսագնդաձև թմբի, ինչպես մետաղյա թասերինը։ Թասը ներսից ներկված է մուգ ներկով, դրսից պտակը և վիզը ներկված են կարմիր։ Մակերևույթը լավ փայլեցրած է (տախտ. II_9)։ Թասն իր ձևով հիշեցնում է ուրարտական և արևմտյան շրջանի մետաղե և կավե թասերը, որոնց կարելի է համարել մեր գունազարդ թասի նախատիպերը։ Այդպիսի թասի բեկորները շատ են գտնվել գունազարդ խեցեղեն նյութեր ունեցող հուշարձաններից։

Հատակին թմբիկ ունեցող ուրարտական փոված լայն թաս գտնվել է Լենինականում (ՊՊԹ 1934/2)։ Այդպիսի թմբիկով խոր թաս հայտնի է նաև Գառնիից (ՊՊԹ 1967/140)։ Կիսագնդաձև թմբիկներով կավե թասեր մեծ քանակությամբ գտնվել են Մինգեչաուրում՝ կարասային թաղումներից և խեցեղեն պատրաստելու արհեստանոցների թրծման հնոցներից, որոնցից մի քանիսը ձևով շատ նման են Գառնիի մեր նկարագրած գունազարդ թասին։ Մինգեչաուրում հայտնաբերված այդ թասերը, մյուսների համեմատ, ավելի վաղ շրջանի են համարվում[19]։

Թասը Հ. Մնացականյանը և Գ. Տիրացյանը համարում են Ջրաբատի թասերի հետագա զարգացումը և թվագրում մ. թ. I դարով[20]։

Գառնիից հայտնաբերված գունազարդ թասը իր մշակմամբ ու ձևով կարող է թվագրվել մ. թ. ա. II—I դդ.։

Այս խմբին են միացվում ժամանակով ավելի ուշ, բայց տեխնիկայի ու կատարման տեսակետից հելլենիստական գունազարդ խեցեղենի տրադիցիաների շարունակությունը հանդիսացող մեկ կանթանի երկու գունազարդ սափորները։ Սրանք գտնվել են Գառնիում, սալարկղային դամբարաններից։ Սափորները իրենց արտաքին մշակումով փոքր ինչ տարբերվում են նախորդ գունազարդ անոթներից։ Սափորներից մեկը (ՊՊԹ 2099/84), որի կանթը կոտրված է (բարձր.՝ 24 սմ, բերանի բացվ.՝ 12 սմ, հատ. լայն.՝ 8,5 սմ), ունի ձգված գնդաձև իրան, լայն ցածր վիզ, որը վերջանում է դեպի դուրս լայնացող պսակով։ Վզի և իրանի միացման տեղում արված է երկու ուղիղ գոտի։ Սափորն ունի օղակաձև ցածր ստոր։ Մակերևույթը տեղ տեղ պատած է եղով սպիտակ անգորով։ Փորի տակից անցնում են լայն ու նեղ զուգահեռ գոտիներ։ Անոթը զարդարված է նաև վզին, ուսին և փորին կարմիր ներկով անփույթ արված շերտերով (տախտ. I_{12})։

Փոքր սափորը (ՊՊԹ 2099/80) ձևերով նման է նախորդին (բարձր.՝ 14 սմ, բերանի բացվ.՝ 8,5 սմ, հատ. լայն.՝ 6 սմ)։ Նախորդի նման այս սափորի մակերևույթը ևս տեղ-տեղ պատած է սպիտակ անգորով։ Փորի տակից անցնում է կարմիր լայն գոտի։ Շուրթը դրսից ու ներսից տեղ-տեղ կարմիր է ներկված, կանթի վրա երկու հորիզոնական լայն ժապավեն կա։ Սա ևս զարդարված է կարմիր ներկով ազատ քաշված շերտերով, որոնք թռչունների են նմանվում (տախտ. II_8)։ Ե՛վ այս, և՛ նախորդ սափորի մակերևույթը ողորկ և փայլեցված չէ։

Այս սափորները իրենց կավով ու մշակումով, կանթերի, շուրթերի ու հատակների ձևերով նման են Գառնիի՝ մ. թ. I—II դդ. թվագրվող դամբարաններից գտնված սափորներին ու կճուճներին[21]։ Ձևերով մեր սափորներին նման, կարմիր ներկով անփույթ արված պատկերներով սափոր է գտնվել Կրետեում, թվագրվում է մ. թ. I դարով[22]։ Գառնիի գունազարդ սափորները ևս պատկանում են մ. թ. I դարին։ Գունազարդ խեցեղենը պատրաստված է հետևյալ եղանակով։ Բրուտը, նախքան թրծելը, անոթի մակերևույթը ծածկել է բաց գույնի անգորով կամ առանց անգորի քսել և լավ փայլեցրել է, ապա հետո մեկ կամ մի քանի գույներով նախշազարդել, ապա թրծել։

Մյուս խումբը, վերը նկարագրած վերջին գունազարդ սափորները, ի տարբերություն նախորդի, չի փայլեցված, նախշազարդումը ավելի անփույթ է արված։ Գունազարդ անոթները ունեն բաց ֆոն, մեծ մասամբ ծածկված են կաթնավուն, դեղնավուն, կարմրավուն և վարդագույն անգորով։ Զարդանախշերի մեջ գերակշռում են երկրաչափական, լայն ու նեղ գոտիները, համակենտրոն շրջանները, խաչաձև, զիգզագաձև, ալիքաձև, ցանցաձև, շղթայաձև, եռանկյունաձև ատակները։ Հանդիպում են նաև բուսական՝ ծաղկաշղթա հիշեցնող և կենդանական պատկեր-

---

[19] С. М. Казиев, Նշվ. աշխ., էջ 21 և հտ., տախտ. $XII_{1,2}$; Г. И. Ионе, О гончарных обжигательных печах из Мингечаура, МКА, II, Баку, 1951, էջ 52, տախտ. I, 1, 2, 6.

[20] А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении, „Известия" АН Арм. ССР, 1961, № 8, էջ 77, տախտ. 7 III;

[21] Б. Н. Аракелян, Гарни II, 1956, նկ. 19, տախտ. IX; X.

[22] R. J. Charleston, Roman Pottery, London, 1955, նկ. 83;


1
0 2 10
2
3
0 2
4
0 4 20


1
0 1
2
0 1
3
0 1
4
0 1
5
0 2

ներ։ Դրանք արված են շագանակագույն, վարդագույն, դարչնագույն և մուգ դարչնագույն, օխրաւի, կաթնագույն, սրճագույն, կարմիր և մուգ կարմիր գույնի ներկերով։

Մինչ վերը նկարագրած գունագարդ խեցեղենի հանգես դալը, կավանոթները գունավոր ներկերով դարդանախշելու տեխնիկան եղել է ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ հին աշխարհի շատ ուրիշ երկրներում։ Այդ տեխնիկան Հայաստանում հանդես է եկել դեռևս IV հազարամյակում և գրեթե առանց ընդհատվելու երբեմն ավելի մասսայական, երբեմն ավելի սահմանափակ ձևով, շարունակվել է մինչև ուրարտական պետության կործանումը։ Նախիջևանի Քյուլ-Թափա կոչված վայրում, Միլի տափաստանում[23] և Էջմիածնի Թեղուտ կոչվող վայրում հայտնաբերված գունագարդ խեցեղենը այլ նախշերից բացի զարդարված է նաև տարբեր ֆոնի վրա արված օտիններով, որոնք շատ բնորոշ են վաղ հայկական և հատկապես հելլենիստական շրջանի գունազարդ խեցեղենին։ Վերջիններին հատուկ մի քանի նախշեր, ինչպիսիք են զիգզագաձև, ալիքաձև, ցանցաձև ու եռանկյունաձև զարդերը և գոտիները շատ են հանդիպում բրոնզեդարյան սունազարդ խեցեղենի վրա։ Տարածված են եղել բրոնզեդարյան անոթների վզի հիմքի վրա արվող զիգզագաձև և ալիքաձև զարդերը։ Գունազարդ խեցեղենի ավանդներն այնուհետև Հայկական լեռնաշխարհում շարունակվում են հանձին ուրարտական գունազարդ խեցեղենի, որը հայտնաբերվել է Վանից, Թոփրախ-կալեից և Կարմիր բլուրից։

Քանի որ Հայաստանի հնագույն շրջանի գունազարդ խեցեղենը աղերսվում է Առաջավոր Ասիայի և հատկապես Փոքր Ասիայի, Իրանի և Միջագետքի վաղ շրջանի գունազարդ խեցեղենի հետ, ուստի վաղ հայկական և հելլենիստական շրջանի գունազարդ խեցեղենի նախշերից շատերը, գոտիները, դալարները, ծաղկաշղթաները, ալիքաձև գծերը, գծիկներով լցված որոշ շեղանկյունիներ և այլն մեծ նմանություն ունեն նաև փոքրասիական, կապադովկիական, հյուսիսմիջագետքյան և իրանական հնագույն գունազարդ խեցեղենի զարդերին։ Առաջավոր Ասիայի վաղ շրջանի 5 ավելի ուշ շրջանի գունազարդ խեցեղենի զուգադրումից երևում է, որ, այդպիսինակ խեցեղենի արտադրությունն այնտեղ (Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Իրան) հարատևում է մինչև այն ժամանակ, երբ Հին Հայաստանում և Անդրկովկասում հետուրարտական շրջանում (մ. թ. ա. VI—V դդ.) այն նոր թափ է ստանում[24]։

Այդ բանի ապացույց կարող է հանդիսանալ փոյուգիական խեցեղենը, որը զարդարված է նաև գոտիների միջև ծաղկաշղթա հիշեցնող, ալիքաձև ու զիգզագաձև և այլ բնորոշ զարդերով։

Իսկ Իրանի մինչև մ. թ. ա. VI—V դարերն հասնող (Շոշ, Մակու, Զիվիե, Հասանլու) գունազարդ խեցեղենի զարդերից իրար հետ ձայնակցում են ուղիղ գոտիները, ալիքաձև գծերը, թռչունների պատկերները, ցանցաձև զարդերը, գալարները և այլն։ Հետաքրքիր է այն փաստը, որ Իրանի ուշ շրջանի խեցեղենը հիմնականում ի հայտ է եկել Ուրմիա լճի շրջանում գտնվող հնավայրերից[25]։

Հայաստանի վաղ հայկական և հելլենիստական շրջանի գունազարդ խեցեղենի վրայի ալիքաձև, զիգզագաձև, ծաղկաշղթայաձև և ժապավենաձև զարդերը որոշ նմանություն ունեն նաև այսպես կոչված հոնիական հասարակ խեցեղենի զարդանախշերին։ Դրանք արված են սև և այլ գույնի ներկերով, իսկ պատկերները տեղավորված են անոթի վզի հիմքի և ուսերի վրա։ VII—V դդ. այդպիսի զարդանախշերով տարբեր տիպի խեցեղեն է արտադրվել Արևելյան Միջերկրածովյան ավազանի մի շարք կենտրոններում, հոնիական աշխարհում՝ փոքրասիական քաղաքներում ու կղզիներում, ինչպես նաև մերձսևծովյան հունական գաղութներում[26]։

Հոնիական գունազարդ գոտիներով և ժապավեններով խեցեղենը գաղութներում ավելի երկարակյանք է ունեցել և նրա արտադրությունը շարունակվում է մ. թ. ա. V—III դդ. ընթացքում[27]։

---

[23] А. А. Нессен, Кавказ и древний Восток в IV и III тысячелетиях до нашей эры, КСИА, 93, М., 1963.

[24] Г. А. Тирацян, О расписной керамике древней Армении, *Պատմա-բանասիրական հանդես*, 1965, № 3, *էջ 269 և հտ.։*

[25] Г. А. Тирацян, *Նշվ. աշխ., էջ 270 և հտ.։*

[26] Р. В. Шмидт, Греческая архаическая керамика Мирмекия и Тиритаки. МИА, № 25, М.—Л., 1952, *էջ 239 և հտ., նկ. 9*; Н. А. Сидорова, Археологическая керамика из Понтикапея, МИА, 103, Москва, 1962, *էջ 142 և հտ., նկ. 18, 19, այդ մասին գրականություն տես նշված աշխատանքներում։*

[27] Т. Н. Книпович, Из истории художественной керамики Северного Причерноморья, СА, VII, 1941, էջ 150; Т. Н. Книпович, Художественная керамика в городах Северного Причерноморья, „Античные города Северного Причерноморья", М—Л., 1955, *էջ 378։*

IV—III դդ. այդպիսի խեցեղեն է հայտնաբերվել Օլվիայում[28], Օլինթոսում, որը Ռոբինսոնը համարում է տեղական մինչպարսկական ժամանակաշրջանի արտադրանք[29].

Հելլենիստական դունաղարդ խեցեղենը թե՛ անոթների ձևերով և թե՛ զարդամոտիվներով որոշակիորեն տարբերվում է մ. թ. ա. VII—VI դդ. հոնիական խեցեղենից։ Այն հանդիսանում է հին արխաիկ զարդարանքի ձևերի վերածնունդը[30]։ Հայաստանից հայտնաբերված հելլենիստական գունազարդ խեցեղենը մեծ նմանություն ունի հելլենիստական աշխարհի մյուս կենտրոններից հայտնաբերված նույնատիպ խեցեղենի հետ։ Բաց ֆոնի վրա կատարված զարդանախշերով խեցեղենը լայն տարածում է ստանում մ. թ. ա. III դ. սկսած։ Այն արտադրվել է անտիկ աշխարհի տարբեր մասերում։ Այդպիսի խեցեղեն է պատրաստվել փոքրասիական արհեստանոցներում, օրինակ, Պերգամում հայտնաբերվել է գունազարդ խեցեղեն[31]։ Այդ տիպի հելլենիստական խեցեղեն է հայտնաբերվել բուն Հունաստանում՝ Աթենքի, Ագորայի[32] և Կորնթոսի[33] հելլենիստական շերտերում, Սիրիայի Անտիոք քաղաքի շրջակայքում[34], Թել Հալաֆի հելլենիստական շերտերում[35]։ Տարբեր գույնի բուսական, մասամբ նաև երկրաչափական ու կենդանական նախշերով է զարդարված Կիպրոսի[36] հելլենիստական երկու շերտից հայտնաբերված խեցեղենը (մ. թ. ա. 325—150 և 150—50 թթ.)։

Ուղիղ և շրջակենտրոն տարբեր գույնի ժապավեններով է զարդարված Կիլիկիայի Տարսոն քաղաքում հայտնաբերված մ. թ. ա. առաջին դարերի խեցեղենը[37]։ Բաց ֆոնի վրա արված գունավոր զարդանախշերով խեցեղեն արտադրվել է հյուսիսային մերձսևծովյան բոլոր գլխավոր քաղաքներում։ Խերսոնեսի հելլենիստական շերտերում բացի մեծ քանակությամբ այդպիսի խեցեղենից[38], գտնվել է նաև III—II դդ. սկզբով թվագրվող կավագործական արհեստանոց[39] նման կավանոթների արտադրության նմուշներով։ Բուսական նախշերով և ժապավեններով են զարդարված Օլվիայում հայտնաբերված տարբեր տիպի մեծ թվով անոթները[40]։ Այդպիսի խեցեղեն գըտ-

---

[28] „Ольвийская агора", „Ольвия и нижнее Побужье в античную эпоху", МИА, 50, М.—Л., 1956, էջ 67 և հտ., նկ. 27։

[29] Excavations at Olinthus, Baltimore, 1933, P. V, տախտ. 132, 133։

[30] Э. Р. Штерн, К вопросу об эллинистической керамике, 300 XXVIII, 1895, էջ 174։

[31] Altertumer von Pergamon, B. 1, 2, Berlin, 1913; A. Conze, Stadt u Landschaft Beiblatt, 45.

[32] Thomson Homer A., Two centuries of Hellenistic Pottery, Hesperia, vol. III, Athens, 1934, նկ. 4, 5; Ghali-Kahil Lilly, La Ceramique Grecque (Fouilles 1911—1956), Paris, 1960, տախտ. LXI_{38}.

[33] Robinson Henry, Excavations at Corinth, 1960, Hesperia, vol. XXXI, № 2, 1962, տախտ. 46։

[34] Waage O., Ceramics and islamic Coins. Antoch on the orontes, IV, Princeton, 1948, տախտ. 1, նկ. 2—5։

[35] Tell Halaf, էջ 85 և հտ., տախտ. $70_{7,22,26}$, $71_{2,35}$, 72_{54}, $75_{32,36,47}$.

[36] The Swedish Cyprus Expedition, vol. IV, p. III, Stockholm, Lund, 1956, Olof Wesberg and Alfred Westholm, The Hellenistic and Roman Period In Cyprus. էջ 55—66, 71—79, նկ. 21—29։

[37] Excavations at göslu Kule Tarsus, տախտ. 132, № 189, 134, № 220։

[38] Г. Д. Белов, Նշվ. աշխ., էջ 152, նկ. 12а; Г. Д. Белов, Отчет о раскопках Херсонеса за 1935—1936 гг., Симферополь, 1938, էջ 25, նկ. 17, էջ 230, նկ. 72, էջ 243, նկ. 88։

[39] В. В. Борисова, Гончарные мастерские Херсонеса, „Сов. Арх.", 1958, էջ 144, 150, նկ. 7։

[40] Э. Р. Штерн, Նշվ. աշխ., էջ 168, տախտ. $IV_{10,11}$, V_{13}, $VI_{20,21,22}$, „Ольвия", т. I, Киев, 1940, Т. Н. Книпович, Керамика местного производства из раскопа И, էջ 165 և հտ., նկ. 107; Т. Н. Книпович, Художественная керамика в городах Сев. Причерноморья, նկ. 16։

երվել է նաև Պանտիկապեյում[41], Միրմեքիայում[42], Թամանյան թերակղզում[43], Ֆանագորիայում[44] և այլ վայրերում։

Բաց ֆոնի վրա գունավոր զարդերով խեցեղեն արտադրվել է Եգիպտոսում՝ Ալեքսանդրիայում, որը համարվում է այդ տիպի խեցեղենի արտադրության ամենահայտնի կենտրոններից մեկը։ Իր տեխնիկական առանձնահատկություններով և նուրբ զարդանախշերով, ուր գերակշռում են բուսական մոտիվները, Ալեքսանդրյան գունազարդ խեցեղենը լայն ճանաչում է ստանում։ Հատկապես հայտնի են ալեքսանդրյան երեք կանթանի ջրամանները (ստամնոս), որոնց վրա կան մ. թ. ա. III դ. առաջին կեսին պատկանող արձանագրություններ։ Մեծ տարածում և երկար կյանք են ունեցել մեկ կանթանի երկարավիզ սափորները (լագինոս), որոնք հասնում են նույնիսկ մ. թ. ա. I դ.[45]։

Բաց, մուգ կարմիր կամ կարմրա-շագանակագույն անգորի վրա ուղղանկյունիներով, եռանկյունիներով, սպիրալներով և ուղղահայաց գծերով զարդարված խեցեղեն արտադրվել է Խորեզմում անտիկ շրջանում՝ մ. թ. ա. IV դ., մ. թ. I դ.[46]։ Զիգզագաձև, ցանցաձև, եռանկյունաձև, հորիզոնական և թեք տարված ժապավեններով, բուսական և կենդանական պատկերներով գունազարդ խեցեղեն անտիկ շրջանում արտադրվել է նաև Մինգեչաուրում։ Այն շատ նման է բրոնզեդարյան գունազարդ խեցեղենին։ Մեծ քանակությամբ նման խեցեղեն է հայտնաբերվել Մինգեչաուրի կաբասային թաղումներից[47]։ Գունազարդ խեցեղենը զարգացման նույն էտապներն է անցել նաև Վրաստանում։ Այդ մասին են վկայում տարբեր վայրերում հայտնաբերված աքեմենյան և հելլենիստական շրջանի գունազարդ խեցեղենի նմուշները[48]։

Այս ամենը ցույց է տալիս, որ մ. թ. ա. III դարից սկսած անտիկ աշխարհի հելլենիստական մշակույթի ոլորտում ընդգրկված կամ նրան հարող երկրներում լայն տարածում է ստանում բաց ֆոնի վրա զանազան գույներով զարդարված խեցեղենը։ Այդ խեցեղենի բնորոշ գծերից մեկն այն է, որ զարդերի մեջ գերակշռում են բուսական և երկրաչափական նախշերը։ Ըստ որում, բուսական զարդանախշերն ավելի հատուկ են հելլենիստական աշխարհի արևմտյան՝ Ալեքսանդրիայի, փոքրասիական կենտրոնների, Հունաստանի, մերձսևծովյան քաղաքների գունազարդ խեցեղենին, իսկ երկրաչափականը՝ արևելյան, Անտիոքի, Թել Հալաֆի, Հայաստանի, Մինգեչաուրի, Խորեզմի և այլ կենտրոնների գունազարդ խեցեղենին։ Մյուս ընդհանուր, բնորոշ գծերից մեկն էլ այն է, որ պատկերները հիմնականում տեղավորված են անոթի վերին կեսում, վզերին, ուսերին։ Այս առումով նրանք հիշեցնում են հոնիական խեցեղենը։ Այնուհետև շատ կենտրոնների արտադրանքում հանդիպում են զարդանախշեր՝ արված ոչ միայն բաց գույնի անգորի ֆոնի վրա, այլև ուղղակի կավանոթի փայլեցրած մակերեսին։

Հայաստանում հայտնաբերված վաղ հայկական և հելլենիստական շրջանի գունազարդ խեցեղենը հանդիսանում է դարերի խորքից եկող տեղական տրադիցիաների շարունակությունը՝ ովյալ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան։ Միայն դարերի ընթացքում մշակված այդ տրադիցիաները ժառանգող վարպետները կարող էին ստեղծել այդպիսի գեղարվեստական բարձր ճաշակով պատրաստված հելլենիստական շրջանի գունազարդ անոթներ։ Պետք է ենթադրել, որ գունազարդ խեցեղենի արտադրությունը շարունակվելով VI—V դդ. հետագայում որոշ ազդեցություն է կրել հոնիական գունազարդ խեցեղենից, որն ըստ երևույթին արդեն թափանցում էր Հայաստան (Արմավիրից և Գառնիից հայտնաբերված գունազարդ խեցեղենի մեջ կան մի շարք նմուշներ, որոնք եթե հոնիական չեն, ապա հոնիական տիպի են)։

---

[41] Э. Р. Штерн, *նշվ. աշխ., տախտ.* V_{12}, VI_{19}.

[42] Т. Н. Книпович, Из истории художественной керамики Сев. Причерноморья, *էջ 142, նկ. 5։*

[43] Т. Н. Книпович, *նշվ. աշխ., էջ 142, նկ. 4։*

[44] М. М. Кобылина, Фанагория, МИА, 56, *նկ. 14а։*

[45] Т. Н. Книпович, Художественная керамика в городах Сев. Прич., *էջ 371 և հտ.։*

[46] „Керамика Хорезма", *էջ 84, 189, նկ. 42։*

[47] С. М. Казиев, *նշվ. աշխ., էջ 21, տախտ.* VIII, IX, XI; Т. Н. Голубкина, О зооморфной керамике из Мингечаура, МКА, т. II, 1951, *էջ 129, նկ. 30։* Е. А. Пахомов, Обследования и раскопки кувшинных погребений Азербайджана, „Известия" Аз. ФАН, 1939, № 3, *էջ 72—73, նկ. 3։*

[48] Г. А. Тирацян, *նշվ. աշխ., էջ 272։*

Հոնական խեցեղեն դեպի Հայկական լեռնաշխարհ կարող էր թափանցել հիմնականում Ալ-Մինայից՝ Միջերկրական ծովի սիրիական ափին VIII դարում ստեղծված հունական ֆակտորիայից, VII—VI դդ. սահմանադրված Կիլիկյան ծովափին հիմնադրված Տարսոն քաղաքից և VI դարում ստեղծված հարավսեծովյան գաղութներ՝ Սինոպից, Ամիսոսից, Տրապիզոնից, չհաշված Փոքր Ասիայով, գլխավորապես Փռյուգիայով անցնող ցամաքային ճանապարհները։ Հետևաբար, Հայաստանի գունազարդ խեցեղենի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Փոքր Ասիայի ներքին շրջանների ուշ փռյուգիական և հարավսեծովյան քաղաքների, հատկապես Սինոպի հոնական խեցեղենի նմուշները[19]։

III—II դդ. Հայաստանում ևս, որը սերտորեն կապված էր հելլենիստական աշխարհի հետ և հանդիսանում էր այդ կուլտուրան կրող երկրներից մեկը, գունազարդ խեցեղենը ազդվելով հելլենիստական երկրներում լայն տարածում գտած նույնատիպ խեցեղենից, այդ շրջանում հասնում է իր ծաղկման զարգացման գագաթնակետին։

Այդ տրադիցիան Հայաստանում այն աստիճան տարածվում է, որ դառնում է հելլենիստական շրջանի գեղարվեստական խեցեղենի տիրապետող ձևերից մեկը։ Այն իր կենսունակությունը մասամբ պահպանում է նաև հետագայում և հասնում է մինչև միջին դարերը։

Հայաստանում արտադրվող հելլենիստական գունազարդ խեցեղենը հանդիսանալով անտիկ աշխարհի այդ տիպի խեցեղենի բազմաթիվ խմբերից մեկը, նրանց հետ ունեցած իր ընդհանրություններից բացի ունի նաև մի շարք տեղական առանձնահատկություններ։ Դա նախ արտահայտվում է կավանոթների ձևերի մեջ, որոնք համընկնում են անզարդ խեցեղենի հետ, ինչպես նաև մոտենում ավելի վաղ շրջանի տեղական անոթներին, հանդիսանալով նրանց հետագա զարգացումը։ Այնուհետև դա որոշակիորեն դրսևորվում է զարդանախշերի ինքնատիպության, կառուցվածքի մեջ և այլն։

Այս բոլորը վկայում է, որ հելլենիստական մշակույթը թափանցել և խոր արմատներ է ձգել Հայ իրականության մեջ, հատկապես քաղաքային բնակչության շրջանում։ Հայ ժողովուրդն անմասն չմնաց արևմուտքից թափանցող, տվյալ ժամանակաշրջանի առաջադեմ բարձր զարգացած հունական մշակույթից և սակայն, ինչպես արևելքում ամենուրեք կատարվեց, կուլորեն չընդունեց այն, այլ աշխատեց տեղական, դարերի ընթացքում ստեղծված բարձր մշակույթի հիմքի վրա ավելի զարգացնել, առաջ մղել։ Այդ երևույթը նկատվում է ոչ միայն քննարկված գունազարդ խեցեղենի բնագավառում (որովհետև միագույն խեցեղենի մեջ նույնպես կան զուտ հելլենիստական խեցեղեն անոթների տիպեր, ինչպիսիք են կանթարոսները, ունգվենտարիաները), այլև մյուս բնագավառներում՝ արվեստի, պաշտամունքի ու կենցաղի մեջ։

[19] Г. А. Тирацян, նշվ. աշխ. էջ 274 և հտ.։